ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.06.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-18/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-10/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 23.05.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-18/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 23.05.2014թ. ներկայացված բողոքով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժիններով հաղթող է ճանաչվել և պայմանագիր կնքելու առաջարկ է ստացել «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն, սակայն գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները, համաձայն որի՝ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով տեղեկացրել է, որ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանել «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-4» ծածկագրով ընթացակարգի տեխնիկական բնութագրի պահանջներին, որով սահմանված է եղել՝ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի» գնման ենթակա ապրանքը, մինչդեռ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի կամ խտանյութ ն/ե կաթիլաներարկման լուծույթի»: Ստացվում է, որ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն չէր կարող հաղթող ճանաչվել և պայմանագիր կնքելու առաջարկ ստանալ, քանի որ՝

1. իր կողմից ներկայացված առաջարկի մեջ առկա է երկակիություն՝ առաջարկվել է դեղափոշի լիոֆիլացված և խտանյութ,
2. լիոֆիլացված դեղափոշին և խտանյութը բոլորովին տարբեր դեղաձևեր են:

Լիոֆիլացված դեղափոշին դա չոր փոշի է և չափվում է միլիգրամներով, իսկ խտանյութը դա բարձր խտության լուծույթ է և չափվում է միլիլիտրերով:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

2. ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 29.05.2014թ. N 01-10-125 գրությամբ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում 1-ին և 2-րդ չափաբաժինների (1-ին չափաբաժին՝ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ)

դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի՝ 1000 մգ ապակե սրվակ» և 2-րդ չափաբաժին՝ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի՝ 200մգ ապակե սրվակ») համար գնման ընթացակարգին մասնակցելու հայտ են ներկայացրել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն և «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հաղթող մասնակից է ճանաչվել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն:

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն տեղեկացրել է նաև, որ «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին որպես գնման ընթացակարգի հաղթող՝ ընտրված մասնակից ճանաչելը համապատասխանել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, քանի որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն դեղի դեղաձևը համարժեքության կարգով 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացրել է խտանյութ հրավերով պահանջված դեղափոշու փոխարեն, (1-ին չափաբաժին-գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) խտանյութ ն/ե ներարկման 1000 մգ/100մլ և 2-րդ չափաբաժին-գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) խտանյութ ն/ե ներարկման 200մգ/20մլ), և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի դրույթները, որպես գնման ընթացակարգի հաղթող/ընտրված մասնակից է ճանաչել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին:

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն նշել է, որ «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով պահանջված 1-ին չափաբաժնով՝ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի՝ 1000մգ ապակե սրվակ», 2-րդ չափաբաժնով՝ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի՝ 200մգ ապակե սրվակ» դեղերին «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից համարժեքության կարգով ներկայացվել է՝ 1-ին

կաթիլաներարկման 1000մգ/100մլ» և 2-րդ չափաբաժնով՝ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) խտանյութ ն/ե կաթիլաներարկման 200մգ/20մլ», այսինքն՝ դեղերի դեղաչափի մեջ չկան տարբերություններ: Դեղափոշու դեպքում բուժիմնարկը ինքը պետք է լուծիչով լուծի դեղափոշին ներարկման համար, իսկ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված խտանյութն արդեն իսկ ներարկման համար պատրաստի լուծույթ է: Հետևաբար, գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացված նվազագույն գնի առաջարկը, որը «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկից տարբերվել է ավելի քան 2 անգամ, գնման ընթացակարգի հաղթող/ընտրված մասնակից է ճանաչել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին, ինչը բխում է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներից, որտեղ ամրագրված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակը: Ավելին, «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկը չի համապատասխանել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի դրույթներին:

3. ԳԲԽ-18/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 23.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

4. ԳԲԽ-18/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-18/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 23.05.2014թ. ներկայացված բողոքը, ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին 29.05.2014թ. ներկայացրած N 01/10-125 գրությունը, «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն և «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժիններով որպես ընտրված մասնակից է ճանաչվել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանել «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-4» ծածկագրով ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող՝ հավելված N 1 տեխնիկական բնութագրի պահանջներին, որի 1-ին և 2-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկան եղել է՝ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի» դեղը, մինչդեռ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից հայտով գին է առաջարկվել «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի կամ խտանյութ ն/ե կաթիլաներարկման լուծույթի» համար:

«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի գնային առաջարկով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջարկել է «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ), դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի՝ 1000 մգ դեղորայքը կամ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) խտանյութ ն/ե կաթիլաներարկման 1000մգ/100մլ» դեղորայքը, իսկ 2-րդ չափաբաժնով՝ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ), դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման

լուծույթի՝ 200մգ դեղորայքը կամ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ),խտանյութ ն/ե կաթիլաներարկման 200մգ/20մլ» դեղորայքը:

Ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝

- 1-ին չափաբաժնով գնման ենթակա ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ դեղորայքի և պատվաստանյութերի անվանումը՝ գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ), բնութագիրը՝ դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի՝ 1000մգ, ապակե սրվակ, չափման միավորը՝ սրվակ, քանակը՝ 1000,
- 2-րդ չափաբաժնով գնման ենթակա ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ դեղորայքի և պատվաստանյութերի անվանումը՝ գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ), գնման առարկայի բնութագիրը՝ դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի՝ 200մգ, ապակե սրվակ, չափման միավորը՝ սրվակ, քանակը՝ 1000:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 3-րդ մասի 18-րդ և 19-րդ կետերը սահմանում են «գնման առարկա» և «գնման առարկայի բնութագիր» հասկացությունները: Մասնավորապես, համաձայն վերոհիշյալ կետերի՝ գնման առարկան հանդիսանում է գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը, իսկ գնման առարկայի բնութագիրը կազմում է գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «գ» կետի համաձայն՝ դեղաձևը՝ սահմանված բաղադրակազմով, գործածման համար որոշակի ձևով դեղահատեր, հաբեր, պատիճներ, կաթիլներ, սրվակներ, ներարկման հեղուկներ և այլն, կայուն ագրեգատային վիճակով (պինդ, մածուցիկ, հեղուկ, գազանման), ֆիզիկական և քիմիական հատկանիշների համալիր բնութագրով օժտված թողարկման ձև է:

ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման

չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղին ներկայացվող հետևյալ պահանջները՝

2) դեղաձևը նշելիս հիմք է ընդունվում «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «գ» կետով սահմանված դեղաձևերը (օրինակ՝ դեղահատ, հաբ, պատիճ, կաթիլ և այլն (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր):

3) դեղաչափը նշելիս բազմաբաղադրատարր դեղերի դեպքում նշվում է յուրաքանչյուր բաղադրատարր դեղի դեղաչափը (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր):

ՀՀ առողջապահության նախարարի 04.04.2014թ. N 10-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանի (ռեեստր) աղյուսակի 2-րդ՝ միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները սյունակում գրանցված «Գեմցիտաբին» անվանմամբ դեղի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տվյալ դեղի համար 3-րդ՝ դեղաձևը սյունյակում նախատեսված են 2 տարբեր դեղաձևեր՝ դեղափոշի և խտանյութ, իսկ 4-րդ՝ դեղաչափը և թողարկման ձևը սյունյակում նախատեսված են 2 տարբեր դեղաչափեր, մասնավորապես՝ լիոֆիլացված դեղափոշին չափվում է միլիգրամով, իսկ խտանյութը չափվում է միլիգրամ/միլիլիտրով:

Կենտրոնում՝ 2014 թվականի հունիսի 6-ին, ժամը 15:00-ին կազմակերպված բանավոր լսումների ժամանակ, հանձնաժողովի այն հարցին, թե արդյոք դեղափոշին և խտանյութը հանդիսանում են նույն դեղաձևը, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ դրանք տարբեր դեղաձևեր են, սակայն ունեն նույն ազդեցությունը: Միևնույն ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց, որ դեղափոշին և խտանյութը հանդիսանում են տարբեր բնուգրեր ունեցող դեղաձևեր:

Այսինքն, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի գնային առաջարկով Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջարկել է Հրավերով պահանջվող գնման առարկայից տարբերվող ապրանք:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով գտնում ենք, որ Պատվիրատուն, «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ին որպես Ընթացակարգի հաղթող (ընտրված մասնակից) ճանաչելով, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, ուստի «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

ԳԲԽ-18/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 23.05.2014թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-18/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը, Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի 23.05.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Մնացականյան Արման